

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-21 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում՝ հանել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների եւ» բառերը:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածի ա) կետի չորրորդ պարբերությունում <<և այլ>> բառից հետո լրացնել <<պատմաճարտարապետական կառույցները և>> բառերը:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1. 3-րդ կետում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«Նշանավոր որեւէ անհատի անվամբ կարող է անվանակոչում կատարվել նրա մահվանից առնվազն 5 տարի հետո:»:

2. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության տարածքում աշխարհագրական օբյեկտները անվանակոչել կամ անվանափոխել նույնատեսակ օբյեկտների կրկնվող անվանումներով:»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 3-րդ կետում <<մեկամսյա>> բառը փոխարինել <<երկշաբաթյա>> բառով, <<քննում են>> բառը փոխարինել <<քննարկել>> բառով, իսկ <<կցելով անվանափոխման կամ անվանակոչման հետ կապված ծախսերի նախահաշիվը:>> բառերը հանել:

2. 4-րդ կետում <<կառավարություն՝ որոշում կայացնելու համար:>> բառերը փոխարինել <<կառավարության քննարկմանը:>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1.1-ին կետում <<անվանակոչումները և անվանափոխումները>> բառերը փոխարինել <<անվանումները>> բառով.

2. բ) ենթակետում <<և (կամ)>> բառը փոխարինել <<կամ>> բառով.

3. գ) ենթակետը հանել:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետում «բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված դեպքերի.» բառերը փոխարինել «սույն օրենքով սահմանված դեպքերում.» բառերով:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 11-րդ հոդվածում`

1. գ) կետում <<համաձայնեցնում և հաշվառում է>> բառերը փոխարինել <<հաշվառում, այնուհետև՝ գրանցում է>> բառերով.

2. դ) կետը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<<ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԿԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Նախագծի հոդված	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
<< Աժ պատգամավոր Լ.Ալավերդյան	Հոդված 2	Առաջարկվում է ոչ թե նշել կոնկրետ եկեղեցիներ ու խաչքարեր, այլ ընդունել ընդհանրացված տերմին:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:
	Հոդված 7	Առաջարկվում է օրենքի 11-րդ հոդվածում <<հաշվառել և գրանցել>> բայերի համատեղ օգտագործումը հստակեցնել:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:
	Հոդված 5	Առաջարկվում է օրենքի 9-րդ հոդվածում <<և (կամ)>> բառերի օգտագործումը հստակեցնել:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: